ԼՈՒՍԱՐԶԱԿ

ԱՆԿԱԽ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ INDEPENDENT WEEKLY NEWSPAPER НЕЗАВИСИМАЯ ЕЖЕНЕДЕЛЬНАЯ ГАЗЕТА

Ապրիլ, 2008 թ. թիվ 5 (4545)

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 9-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում կայացավ Ազգային Ժողովի հատուկ նիստ, որի ընթացքում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի երդմնակալության արարողությունը: Երդման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին շուրջ 60 երկրների պաշտոնական պատվիրակություններ, 12 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Արարողությանը հաջորդեց զորահանդես և զինվորական քայլերթ:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Տիգրան Սուրենի Սարգսյանը ծնվել է 1960թ. հունվարի 29- ին Կիրովական (Վանաձոր) քաղաքում:

Կրթությունը

1967-1977 - ք. Երևան, Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոց

1977-1978 - ք. Երևան, տեխնիկական թիվ 14 ուսումնարան

1978-1980 - ք. Երևան, Ժողովրդական տնտեսության ինստիտուտ, պլանավորման և տնտեսության ֆակուլտետ

1980-1983 - ք. Լենինգրադ, Ռուսաստան, Ն. Ա. Վոզնեսենսկու անվան ֆինանսա-տնտեսական ինստիտուտ, գերազանցության դիպլոմ

1983-1987 - Ասպիրանտուրա Ն. Ա. Վոզնեսենսկու անվան ֆինանսատնտեսական ինստիտուտում, «Տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորումը Հայաստանի օրինակով» թեմայով թեզ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու

1994 - «Օրինաստեղծ գործունեություն», Իրավունքի միջազգային ինստիտուտ, ք. Վաշինգտոն, ԱՄՆ

1996-1997 - «Բանկերի արդյունավետ կառավարում», Տնտեսական զարգացման ինստիտուտ, Համաշխարհային բանկ, Վաշինգտոն, ԱՄՆ

2005 - Երևան, դեկտեմբերի 2-ին շնորհվել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում

Ավելի քան 20 գիտական հոդվածների հեղինակ է

Աշխատանքային գործունեությունը

1987-1990 - Տնտեսության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտ, ավագ գիտ. աշխատող, միջազգային տնտեսական կապերի խմբի ղեկավար

1988-1993 - Երիտասարդ մասնագետների և գիտնականների հանրապետական խորհուրդ, նախագահ

1990-1991 - Տնտեսական բարեփոխումների հիմնախնդիրների վերաբերյալ բանկիրների համար կազմակերպվող մշտական սեմինարների կոորդինատոր

1993-1994 - Երևանի պետական համալսարան, բանկային գործի դասավանդում ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

1995-1998 - Հայաստանի բանկերի ասոցիացիա, նախագահ

1995-2008 - Անցումային հասարակության հետազոտության ինստիտուտ, տնօրեն

1998 մարտից 2008 ապրիլ - ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

2005-2007 - Միջպետական բանկի խորհրդի նախագահ

Ընտանիքը

Ամուսնացած է, ունի մեկ դուստր և մեկ որդի: Անկուսակցական է:

ԱՋԱԿՑԵԼՈՒ ԵՄ ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Ինչպես հայտնի է, մայիսի 4-ին Սպիտակ քաղաքում տեղի են ունենալու քաղաքապետի ընտրություններ, առաջադրված թեկնածուները 7-ն են: Բնական է, որ ինչպես և յուրաքանչյուր ընտրություն, այս մեկը ևս լի է զանազան խռսակցություններով ու ասեկոսեներով, և հատկապես դրանք առնչվում են այն անձանց, ովքեր կապ ունեն Սպիտակ քաղաքի հետ: ԱԺ-ի պատգամավոր Վոլոդյա Բաղալյանից , ով երեք անգամ պատգամավոր է ընտրվել Սպիտակից՝ մեծամասնական կարգով, փորձեցինք ճշտել, թե ինքն անձամբ ո՞ւմ է սատարելու կամ չի սատարելու քաղաքապետի պաշտոնին հավակնող թեկնածուներից:

- Պարոն Բաղալյան, Սպիտակն այսօր պատրաստվում է ՏԻՄ-ի ընտրություններին, Ձեր կարծիքով, ինչպե՞ս դրանք կանցնեն և ո՞վ է հավակնում լինել հաջորդ քաղաքապետը:

- Նախ շնորհակալ եմ, որ այդ հարցն ինձ ուղղեցիք, որովհետև դա, իրոք, ինձ համար շատ կարևոր հարց է. ծնվել և մեծացել եմ Սպիտակում, ունեմ ազգականներ և բարեկամներ, ընկերներ և մտերիմներ: Երեք անգամ միայն մեծամասնական կարգով Սպիտակից ընտրվել եմ ՀՀ ԱԺ-ի պատգամավոր՝ստանալով ժողովրդի վստահության քվեները: Տարիների ընթացքում միշտ ինձ հետ են եղել և աջակցել այն մարդիկ, ովքեր այսօր առաջադրել են իրենց թեկնածությունները, և ես հարգանքով եմ վերաբերվում նրանց ինքնառաջադրման որոշմանը: Նրանք բոլորն էլ արժանի են: Ես աջակից կլինեմ արդար և օբյեկտիվ ընտրությունների անցկացմանը, և ով ժողովրդի կողմից առավել ձայներ կհավաքի և կընտրվի քաղաքապետի պաշտոնում, ես պատրաստ կլինեմ աջակցելու և օգնելու նրան:

- Այսինքն՝ առաջադրված 7 թեկնածուներից որևէ մեկին դուք առանձնակի չե՞ք սատարում, և պտտվող լուրերը չե՞ն համապատասխանում իրականությանը:

- Թե Սպիտակում ընտրությունների հետ կապված ինձ վերաբերվող ինչպիսի լուրեր են տարածվում, ես տեղյակ չեմ և նման լուրերի տեղիք չեմ տվել: Կրկնում եմ՝ ես 7 թեկնածուներին էլ ճանաչում եմ, նրանց բոլորի հետ ունենք միասին անցած ճանապարհ, բարեկամական, մտերմական, գործնական կապեր, և ողջունում եմ նրանց առաջադրումը, քանի որ նրանք գտել են, որ իրենց արժանիքներով կարող են օգտակար լինել քաղաքին և քաղաքացիներին: Իմ գերխնդիրն այսօր ոչ թե նրանցից կոնկրետ մեկին սատարելն է, այլ ճիշտ, արդար ընտրությունների անցկացումը:

- Ինչպե՞ս եք տեսնում Սպիտակի ապագան՝ կապված ընտրությունների հետ:

- Ես չեմ կարող անտարբեր լինել Սպիտակի ապագայի հարցում և դրա համար կաշխատեմ աջակցել ամեն կերպ, որպեսզի ընտրություններն անցնեն օրինական ճանապարհով, առանց որևէ խախտումների, չէ՞ որ երբ ժողովուրդն ինքն է կատարում իր ընտրությունը, ապա ավելի մեծ հարգանք ու վստահություն է ունենում իր ընտրյալի հանդեպ: Իսկ դա, բնականաբար, ավելի արդյունավետ կդառնա շրջանի կամ քաղաքի ծրագրերի կյանքի կոչման և հետագա զարգացման հարցում: ՀՀ ԱԺ-ի ներկա կազմում ես պատգամավոր եմ ընտրվել Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով, որը ավելի մեծ հնարավորություն է տալիս՝ կյանքի կոչելու այն ծրագրերը, որոնք կապված են Սպիտակի բարեկեցության, ժողովրդի սոցիալական վիճակը բարելավելու հետ: Ժողովուրդն ունի շատ կարիքներ և լուծվելիք խնդիրներ, որոնք պահանջում են լինել իրենց կողքին և ամեն կերպ աջակցել:

- Իսկ ինչո՞վ է ապրում Սպիտակն այսօր:

- Ես քաջատեղյակ եմ Սպիտակի այսօրվա վիճակին: Գլխավորը մարդկանց, հատկապես երկրաշարժից տուժածներին, բնակարաններով ապահովելն է: Արտադրական օբյեկտների ստեղծումը, որպեսզի մարդկանց ապահովեն աշխատանքով: Գյուղատնտեսության վերաբերյալ՝ հատկապես գյուղմթերքների վերամշակման և արտադրանքի իրացման խնդիրների, մշակութային և այլ կենսական կարևոր հարցերի լուծմանը: Վերջին տարիներին կառավարության ձեռնարկած միջոցառումներով բնակարանային շինարարության բնագավառում բավականին աշխատանք է կատարվել, սակայն այդ հարցին լրիվ լուծում չի տրված: Մյուս բնագավառներում ևս կան ձեռքբերումներ, սակայն դրանք ևս խիստ անբավարար են: Ես իմ հնարավորությունների սահմաններում աջակցելու և օգնելու եմ նորընտիր քաղաքապետին՝ այդ խնդիրներին աստիճանաբար լուծում տալու հարցերում: Սպիտակցին արժանի է բարեկեցիկ և արժանավայել ապրելու իր հայրենի քաղաքում:

Լիա Խոջոյան
«Փակագիծ», 2008 ապրիլ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԻՏԱԿՈՒՄ

2008թ. մայիսի 4-ին տեղի կունենա Սպիտակի քաղաքապետի հերթական ընտրություն:

Ըստ 29 ԸԸՀ-ի Սպիտակի քաղաքապետի թեկնածուներ են գրանցվել՝

Սամվել Գաբրիելյանը, Աշոտ Դանիելյանը, Գագիկ Սահակյանը, Արտյոմ Մակարյանը, Միրան Սիսակյանը, Սերժիկ Թադևոսյանը և Վանիկ Ասատրյանը:

Միաժամանակ նշենք, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 5-րդ կետի և 129 հոդվածի համաձայն ապրիլի 15-ից սկսվել է նախընտրական քարոզչությունը, որն ավարտվելու է քվեարկությունից մեկ օր առաջ՝ մայիսի 2-ին ժամը 24:00-ին: Ինքնաբացարկի մասին թեկնածուները դիմում կարող են ներկայացնել քվեարկության օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ (ԸՕ հ.125, կետ 2):

Քվեարկությունը տեղի կունենա Սպիտակ քաղաքում կազմավորված 9 ընտրական տեղամասերում 2008թ. մայիսի 4-ին առավոտյան ժամը 8:00-ից մինչև 20:00-ն:

Սեփական լրատվություն

«ԼՈՒՍԱՐԶԱԿՆ» ՈՒՆԻ ԻՐ ՎԵԲ-ԿԱՅՔԸ www.lusardzak.com

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջոցներից հատկացված և Եվրասիա համագործակցության հիմնադրամից ստացված «Լուսարձակ» թերթի հզորացում ծրագիրը (Y08-2010) թևակոխել է եզրափակիչ փուլ: Ծրագրի լրջագույն ձեռքբերումների շարքին պետք է դասել թերթի վեբ-կայքի ստեղծումը: Արդեն ձևավորվել և գրանցվել է թերթի վեբ-կայքը, որն ունի հետևյալ www.lusardzak.com հասցեն, այցելեք էլեկտրոնային այդ հասցեն և դուք առանց «միջնորդի» կծանոթանաք «Լուսարձակի» թե վերջին, թե նախորդ համարների նյութերին:

Վեբ-կայքը, որպես տեղեկատվական տեխնոլոգիա աշխարհում առաջին անգամ արարվել է 1991թ. օգոստոսի 6-ին Թիմ Բեռներս-Լիի կողմից: Վեբ-կայքը հանդիսանում է ինֆորմացիա ստանալու օպերատիվ միջոց, որն իրականացվում է տեխնիկական միջոցներով համակարգիչի օգնությամբ, ինտերնետային կայքի շնորհիվ: «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի աջակցությամբ հնարավոր եղավ «Լուսարձակի» համար ստեղծել վեբ-կայք: Աշխարհի տարբեր հորիզոնականներում ապրող ցանկացած քաղաքացի, ով ունի ինտերնետ կապ կարող է վայրկյանների ընթացքում հաղորդակցվել մեր թերթին և ծանոթանալ Սպիտակի տարածաշրջանում և ընդհանրապես մարզում, հանրապետությունում, աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, որոնք տեղ են գտել թերթի էջերում:

Բարի գալուստ «Լուսարձակի» վեբ-կայք:

Նույն ծրագրի շրջանակներում օրերս տեղի ունեցավ նաև «կլոր սեղան», որի մասնակիցները քննարկեցին «Լուսարձակ» շաբաթաթերթի հզորացում «Ծրագրի իրականացման ընթացքի մասին» և «Մարզային ծրագրի մամուլի դերը քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում» հարցերը: «Կլոր սեղանի» մասնակիցների առջև զեկուցումներով հանդես եկան թերթի գլխավոր խմբագիր Ֆահրադ Ափուջանյանը, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գևորգյանը և նախագահի տեղակալ, գրող, հրապարակախոս Գրիգոր Ջանիկյանը: Այնուհետև տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն, որին ակտիվորեն մասնակցեցին ՎՊՄԻ արվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գ. Թովմասյանը, «Լոռու Մարզ» թերթի գլխավոր խմբագիր Մ. Միկոյանը, «Մաշտոց» հանդեսի գեղ. խմբագիր Ս. Մալխասյանը, Շիրակամուտի գյուղապետ Ա. Պապոյանը, մանկավարժ Ժ. Հերիքնազյանը, «Սպիտակ» ջոկատի հրամանատար Ս. Սահակյանը և ուրիշներ:

«Լուսարձակ»

ՀԱՄԱՐՈՒՄ

Սպիտակի քաղաքապետի թեկնածու ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ էջ 2

«ԼՈՒՍԱՐԶԱԿԻ» ՀՅՈՒՐԱՍՐԱՀՈՒՄ Է ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ՕԹԱՐՅԱՆԸ էջ 3

ՆՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՏԵՆԻՆ էջ 4

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սամվել Լևոնի Գաբրիելյանը ծնվել է 1972 թ. հուլիսի 18-ին, Սպիտակ քաղաքում, ինժեներ-շինարարի ընտանիքում:

1989 թ. ավարտել է Սպիտակի թիվ 7 միջն. դպրոցը: Նույն թվականին ընդունվել և 1994 թ. ավարտել է Երևանի ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի «Մեխանիկա-մեքենաշինական» բաժինը:

1994-1997 թթ. աշխատել է Սպիտակի ԿԱՄ-ի Նոր Խաչակապի կարի ֆաբրիկայի տնօրեն:

1997-2001 թթ. Սպիտակի «Հաց» միավորման տնօրեն:

2003-2005 թթ. աշխատել է Սպիտակի քաղաքապետի խորհրդական:

2007 թ. հուլիսից մինչև այժմ աշխատում է Լոռու մարզի գազի ներտնային սպասարկման ծառայության Սպիտակի տեղամասի պետ: Սպիտակի ավագանու անդամ է: Ամուսնացած է, ունի երեք երեխա:

Ծառայել է հայոց բանակում, անկուսակցական է:

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԿՈՉԸ

1988-1991 թթ. Սպիտակի շրջանի ղեկավար, ԽՍՀՄ ժողդեպուտատ, տնտեսագիտության դոկտոր Նորիկ Մուրադյանի նախաձեռնությամբ Սպիտակ քաղաքի մուտքի մոտ գտնվող բարձունքում երկրաշարժի զոհերի հիշատակին կառուցվող նոր հուշահամալրի տարածքում կոչ եմ անում կազմակերպել ծառատունկ:

Իմ նախընտրական շտաբի կողմից կտնկվի 2000 ծառ:

Սպիտակի քաղաքապետի թեկնածու
Սամվել Գաբրիելյան

ԴՐՈՒՅԹՆԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ

Սպիտակ քաղաքի զարգացման աշխատանքներին նոր լիցք հաղորդելու ցանկությունն ու մտադրությունը ինձ հուշել են առաջադրվելու քաղաքապետի թեկնածու:

Քաղաքապետի դիրքը կօգնի Սպիտակ քաղաքի զարգացման հարցերի լուծմանը ծառայացնել ոչ միայն իմ անձնական հնարավորությունները, այլև պետական լծակները՝ համախմբելու ժողովրդին՝ առաջնորդվելով օրենքի, արդարության, բարոյականության, պարկեշտության չափանիշներով: Սպիտակի քաղաքապետ ընտրվելու դեպքում մեր ժողովրդի առջև պարտավորվում եմ.

- նպաստել քաղաքում համերաշխ, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը
- քաղաքի զարգացման աշխատանքներին ներգրավել գիտելիքներ ու փորձ ունեցող մարդկանց
- հետևողականորեն ու անշեղորեն իրականացնել հետևյալ ծրագրերը.

Տեղական ինքնակառավարման ոլորտում լուրջ միջոցառումներ կիրականացվեն քաղաքացիական և ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման, իրական տեղական ինքնակառավարման համակարգի ճկուն ու արդյունավետ մեխանիզմների կայացման ուղղությամբ՝ ժողովրդին ներգրավելով քաղաքի կառավարման գործընթացին:

Տնտեսության ոլորտում կենսական կարևոր խնդիր է քաղաքի մասնավոր, կիսամասնավոր, համատեղ և այլ տիպի ձեռնարկությունների (հացամթերքների կոմբինատ, վերելակաշինական գործարան, պանրի գործարան և այլն) վերագործարկումը, վերապրոֆիլավորումը և մանր արտադրությունների կազմակերպումը: Դրանք լինելու են ջերմոցային, ձկնաբուծական, թռչնաբուծական, գյուղատնտեսական մթերքների մթերման, վերամշակման, լայն սպառման ապրանքների արտադրության ձեռնարկություններ:

Նպաստավոր պայմաններ կստեղծվեն ՓՄՁ-ների (փոքր և միջին ձեռներեցության), ազատ տնտեսական գործունեության ծավալման ուղղությամբ: Աշխատատեղեր ստեղծող յուրաքանչյուր սպիտակցի կարժանանա ամենայն աջակցության, կտրվեն անհրաժեշտ տարածքներ, շինություններ, կլինեն միջնորդություններ արտոնյալ և ցածր տոկոսներով երկարաժամկետ վարկեր ստանալու համար:

Աշխատանքներ եմ տանելու Սպիտակում տուրիզմի (զբոսաշրջության) կազմակերպման և զարգացման ուղղությամբ, որի համար նախատեսվում է Սպիտակում իրականացնել բարձր աստղանիշ ունեցող հյուրանոցային համալիրի կառուցման ծրագիր, որը զարկ կտա նաև սպասարկման ոլորտի զարգացմանը:

Աշխատանքներ են տարվելու բնակարանաշինության ծավալների մեծացման ուղղությամբ այն հաշվով, որ բոլոր անօթևան ընտանիքները ապահովվեն բնակարաններով, հատկապես խոսքը վերաբերում է մասնավոր սեփականատերերին, որոնց ավերված բնակարանների գումարները մնացին բանկերում: ԲԳՎ-ների և այլ միջոցների հաշվին քաղաքում կառուցել բնակելի էլիտար նոր շենքեր: Ընթացք կտրվի նաև բազմաբնակարան անավարտ երկու շենքերի շինարարությանը:

Մշտապես իմ ուշադրության կենտրոնում կգտնվեն քաղաքաշինության, կառուցապատման, աղբահանման, կանաչապատման, փողոցների, ճանապարհների լուսավորման, բարեկարգման ու վերանորոգման, քաղաքի տարբեր թաղամասերի գազիֆիկացման, խմելու ջրի շուրջօրյա անխափան մատակարարման, ոռոգման համակարգի վերականգնման աշխատանքները: Այդ նպատակով Լեռնանցք գյուղի հյուսիսային մասերից Սպիտակ տեղախոխել այնտեղ առկա խմելու ջրի պաշարները, ինչպես նաև նախատեսվում է ոռոգման ջրի նոր ջրանցքի շինարարություն Չիչխան գետի Գեղասար գյուղին հարող տարածքներից մինչև «Թաքուններ» հանդամասը: Այս ամենը կենսագործելու նպատակով լուրջ աշխատանքներ են տարվելու ՀՀ ԱԺ-ի և կառավարության հետ, որպեսզի նրանց կողմից ընդունվեն Սպիտակ քաղաքի զարգացման վերաբերյալ հատուկ օրենք և որոշում արտասահմանյան ներդրողների կողմից արտոնյալ պայմաններով ֆինանսական ներդրումներ կատարելու համար:

Սոցիալական ոլորտում իրականացնել այնպիսի քաղաքականություն, որն էապես կթուլացնի հասարակության մեջ առկա բևեռացումը՝ նպաստելով հասարակության բոլոր շերտերի կենսամակարդակի բարձրացմանը: Մշտապես իմ ուշադրության կենտրոնում եմ պահելու միայնակ ծերերին, թոշակառուներին, բազմանդամ ընտանիքներին, հաշմանդամներին, հայրենական և աֆղանական պատերազմների վետերաններին, Ղարաբաղի ազատամարտի մասնակիցներին, որբ երեխաներին, փախստականներին, բռնադատվածներին՝ նրանց խնդիրներին և հուզող հարցերին տալով սպառիչ պատասխան: Միայնակ ծերերին ճաշարան հատկացնել քաղաքի կենտրոնական մասում: Անապահով մարդկանց տալ քաղաքում անվճար երթևեկելու հնարավորություն:

Մշակույթի ոլորտում կարևոր հանգամանք է բնակչության հոգևոր կյանքի և գեղագիտական դաստիարակության կազմակերպումը և զարգացումը: Այդ նպատակով նախատեսվում է Սպիտակում ստեղծել դրամատիկական պետական թատրոն, ժամանակակից արվեստի կենտրոն, երկրագիտական թանգարան: Վերանորոգել քաղաքային զբոսայգին, այնտեղ տեղադրել նոր կարուսելներ, ատրակցիոն խաղասրահներ և ժամանցի այլ միջոցներ, նման պայմաններ ստեղծել նաև թաղամասերում և բազմաբնակարան շենքերի բակերում: Պարբերաբար կկազմակերպվեն տեղական էթնոսին բնորոշ տոնահանդեսներ՝ երգի, բերքի տոներ, կանցկացվեն ավանդական մասնագիտական, եկեղեցական-ժողովրդական տոնախմբություններ, կարմատավորվեն ժողովրդական նոր ծեսեր: Այդ նպատակով լայնորեն կօգտագործվեն մշակույթի պալատի, հանրակրթական, երաժշտական և նկարչական դպրոցների հնարավորությունները:

Իմ կարևորագույն պարտավորությունների շարքում եմ դասում կրթության և առողջապահության նկատմամբ ունեցած մեծագույն ուշադրությունը: Կառավարության հատկացրած միջոցներով նախատեսվում է քաղաքում կառուցել նախադպրոցական հիմնարկների՝ մանկապարտեզների նոր, ժամանակակից ցանց: Ամեն ինչ արվելու է հասարակության մեջ բարձրացնելու ուսուցիչների և բժիշկների հեղինակությունը՝ բարելավելով նրանց սոցիալական պայմանները: Բուժհիմնարկներում երեք ամիսը մեկ կկազմակերպվի բաց դռների օր:

Կխրախուսվի ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը, աշխատանքներ են տարվելու մարզադաշտ և լողավազան կառուցելու ուղղությամբ, որը կնպաստի սպիտակցի մարզիկների նոր նվաճումներին, բնակչության ֆիզիկական կոփվածության և առողջության ամրապնդմանը:

Ամենայն ուշադրությամբ զբաղվելու եմ մայրության և կանանց իրավունքների պաշտպանության հարցերով: Իմ ամենօրյա ուշադրության կենտրոնում պետք է լինեն երիտասարդության խնդիրները, և հատկապես նրանց ազատ ժամանցի խելացի ու բովանդակալից կազմակերպման հարցերը: Հնարավորություններ պետք է ստեղծել ուսանողներին Վանաձոր անվճար տեղափոխելու համար, իսկ Երևանում սովորող ուսանողների համար նման պայմաններ ստեղծել միայն շաբաթ և կիրակի օրերին: Քաղաքում երիտասարդների համար կկազմակերպվեն անգլերեն լեզվի ուսուցման և համակարգչային դասընթացներ՝ աջակցելով նրանց Սպիտակում կամ հանրապետության այլ վայրերում աշխատանքի ընդունվելու գործում:

Նախատեսվում է ստեղծել «Սպիտակի զարգացում» բարեգործական հիմնադրամը, որին իրենց նպաստը կբերեն ոչ միայն քաղաքում, հանրապետությունում և արտասահմանում ապրող մեր գործարար հայրենակիցները, այլև օտարերկրյա բարեգործներ և կազմակերպություններ: Գոյացած միջոցները նպատակամղել քաղաքի զարգացմանը և վերոնշյալ միջոցառումների կենսագործմանը:

Այս ամենն իրագործելու համար քրտնաջան աշխատանք է պետք:

Լի եմ վճռականությամբ ու պատրաստակամությամբ՝ ծառայելու սպիտակցուն, ապրելու նրա հոգսերով ու իղձերով, լուծելու նրան մտահոգող սոցիալ-տնտեսական ցանկացած հարց:

Ես գնում եմ ընտրությունների
«ԱՐԱՐԵՆՔ ՄԻԱՍԻՆ»
նշանաբանով:

«ԼՈՒՍԱՐՁԱԿԻ» ՀՅՈՒՐԱՍԱՐԱՀՈՒՄ Է ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ՕԹԱՐՅԱՆԸ

Մարինե Իսահակի Օթարյանը ծնվել է Սպիտակ քաղքում 1969թ-ի նոյեմբերի 8-ին:

1977թ-ին ընդունվել է Սպիտակի թիվ 2 միջն. դպրոցը, այնուհետև սովորել է թիվ 3 միջն. դպրոցում, իսկ1985-ին՝ տեղափոխվել է թիվ 7 միջն. դպրոցը, որն էլ ավարտել է 1987-ին: 1979-1986թթ. սովորել է Սպիտակի երաժշտական դպրոցի, դաշնամուրային բաժնում: Դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Սպիտակի պիոներ տանը որպես ազգագրական երգի, պարի խմբակի ղեկավար: Հենց այստեղ էլ 1988-ի դեկտեմբերի 7-ի չարաբաստիկ լուսաբացը ժամանակավորապես ընդհատել է աշխատանքային գործունեությունը: Ստացել է մարմնական վնասվածք: Բուժվել է Երևանի Էրեբունի հիվանդանոցում, Միքայելյանի անվան ինստիտուտում, Մոսկվայի Սկլիֆոսովսկու անվան ինստիտուտում, այնուհետև Կանադայում:

Կանադայից վերադառնալուց անմիջապես հետո 1990-ին ընդունվել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը (կոմպոզիտոր Ստեփան Լուսիկյանի դասարան): 1991-ին այցելել է Լիբանան ուր 21 տարեկանում մկրտվել է Անթիլիասի մայր տաճարում: Հանդիպել է Կիլիկիո տան կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ: 1996 թ-ին երբ դեռ 4-րդ կուրսի ուսանող էր, նշանակվել է Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն, ուր և աշխատում է մինչև հիմա: 1998 թ. երկրաշարժի 10-ամյակի արթիվ, գրել է «Իմ հին ու նոր Սպիտակ» երգը, որը քաղաքապետ Ս. Ավետիսյանի և քաղաքի ավագանու որոշմամբ ընդունվել է որպես քաղաքի հիմն: Նույն տարվա դեկտեմբերին մեկնել է ԱՄՆ, ուր Սան-Ֆրանցիսկո, Լոս- Անջելոս քաղաքներում հանդիպումներ ու ելույթներ է ունեցել հայկական համայնքում, դպրոցներում: Հեռուստալիքներով ցուցադրվել է «Իմ հին ու նոր Սպիտակ» երգի տեսահոլովակը: 2007-ին մասնակցեցել է USAID-ի հայտարարած «Թանգարանների կառավարում» մրցույթին և հաղթել: Հայաստանի թանգարանների 9 տնօրենների հետ օգոստոսին մեկնել է ԱՄՆ, Բոստոն: **Մարինե Օթարյանի հետ զրուցեց Ֆ. Ափուջանյանը, ստորև ներկայացնում ենք զրույցը:**

Ֆ. Ափուջանյան.- *Հարգելի Մարինե, մեր ընթերցողներին, անշուշտ, հետաքրքրում է մեծ կոմպոզիտորի անցած կյանքի ուղին, ինչպիսին է եղել նրա մանկությունն ու պատանեկությունը:*

Ս. Օթարյան.- Ալեքսանդր Սպենդիարյանը ծնվել է 1871թ. Ղրիմի թերակղզում գտնվող Կախովկա ավանում՝ ատաղձավաճառի ընտանիքում: Երբ Ալեքսանդրը 6 տարեկան էր, մայրը 5 զավակների հետ (2 տղա, 3 աղջիկ) տեղափոխվում է Սիմֆերապոլ: Մայրը երաժշտության, արվեստի սիրահար էր և նրանց տանը հաճախ էին կազմակերպվում հյուրասիրություններ, որոնց ժամանակ ներկա էր լինում հայ մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին:

Փոքր Ալեքսանդրը սկզբում հետաքրքրություն էր ցուցաբերում կերպարվեստի նկատմամբ ու թղթե ինքնատիպ ֆիգուրներ էր պատրաստում՝ թռչուններ, ձիեր, ձկներ: Գերված երեխայի շնորհքով, որը համառորեն ձևեր է որոնում, Այվազովսկին վերցնում է դրանցից մի քանիսը Գեղարվեստի ակադեմիայում ցուցադրելու նպատակով: 4-5 տարեկանից սկսած Ալեքսանդրը առավելապես տարվում է երաժշտությամբ՝ սկզբում սովորում է դաշնամուր նվագել, ապա հրապուրվում է ջութակով: Կոմպոզիտորի հայրը ոչինչ չէր խնայում երեխաների ուսման համար և շուտով 1881թ. Լեոնիդը՝ ավագ եղբայրը, իսկ մեկ տարի անց 1882թ. նաև Ալեքսանդրը ընդունվում են Սիմֆերոպոլի դասական գիմնազիան: Գիմնազիայում սովորելու ժամանակ Ալեքսանդրը ընդգրկվում է դպրոցական երաժշտախումբ և այդ ժամանակից էլ կատարում ստեղծագործական առաջին փորձերը:

1890թ. ավարտելով գիմնազիան Սպենդիարյանը հոր հետ մեկնում է Վիեննա, որտեղ հնարավորություն է ունենում լսել Բիզեյի «Կարմեն»-ը՝ հռչակավոր արտիստների կատարմամբ: Հենց այդ ժամանակից նրա մեջ ծնվեց հատուկ մի սեր նվագախմբի նկատմամբ և ամրապնդվեց նույնպիսի սեր՝ երաժշտության մեջ էկզոտիկ կոլորիտի նկատմամբ:

Լեոնիդը Մոսկվայի համալսարանի երկրաբանության բաժնի ուսանող էր, երբ Ալեքսանդրը վերադարձավ Վիեննայից: Հոր խորհրդով նա նույնպես ընդունվում է համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, սակայն մեկ տարի անց տեղափոխվում է իրավաբանական ֆակուլտետ: Մոսկվայի տարիները շատ վճռորոշ եղան եղբայրների համար նրանք հայտնվեցին հայ համայնքի ուշադրության կենտրոնում: Այդ հանդիպումների ժամանակ նրանք կարդում էին հայկական թերթեր, ծանոթանում հայ մշակույթին: Անվանի բժիշկ Սերգեյ Շահինյանի (գրող Մարիետա Շահինյանի հայրը), իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսոր Ներսես Ներսեսովի տանը հյուրընկալվելիս ծանոթանում էին հայ մտավորականների հետ: Նման հավաքույթներից մեկի ժամանակ էլ 1894թ. Սպենդիարյանը ծանոթանում է բանաստեղծ Ալ. Ծատուրյանի հետ և ոգեշնչված նրա «Այ վարդ» բանաստեղծությամբ այն վերածում է հրաշալի ռոմանսի, որն էլ սկիզբ դարձավ Սպենդիարյանը կոմպոզիտորական լուրջ գործունեության:

Շարունակելով ուսումը Մոսկվայում՝ Սպենդիարյանը հանդես է գալիս անվանի խմբավար Կլենովսկու ղեկավարությամբ գործող ուսանողական նվագախմբում, որի խորհրդով 1896թ. Սպենդիարյանը իր ստեղծագործությունները ներկայացնում է անվանի կոմպոզիտոր Ն. Ռիմսկի-Կորսակովին: Ծանոթանալով Ալեքսանդրի ստեղծագործություններին՝ Կորսակովը համաձայնվում է մասնավոր դասեր տալ: Այդ հանդիպման մասին հետագայում ինքնակենսագրության մեջ Սպենդիարյանը գրում է. «Նիկոլայ Անդրեևիչը ընդունեց, որ ես ունեմ կոմպոզիցիայի ամենալուրջ պարապմունքներին նվիրելու բոլոր տվյալները և համաձայնեց դառնալ իմ ուսուցիչը: Մեծ ուրախություն և անասելի բավարարություն զգացի ես՝ միայն այդ պահից հավատալով իմ ուժերին»:

Այդ ժամանակ Մոսկվայում մասնավոր դասեր էր ստանում վորոնեժցի հայտնի կալվածատեր Ապոլլոն Էբեռլեի դուստրը՝ Վառվառան: Սաշան ծանոթանում և սիրահարվում է իրենից վեց տարով մեծ գեղեցիկ օրիորդին: Այդ մասին են վկայում Վառվառային գրված նրա նամակները, որոնցից մեկում նա գրում է. «Դուք ոչ միայն իմ մեջ արթնացրիք անկեղծ բարեկամության և Ձեր նկատմամբ կապվածության զգացմունք, այլև դարձաք իմ ներշնչանքի աղբյուրը, մղելով ինձ դեպի նոր ստեղծագործություններ»: Էբերլեն դառնում է Սաշայի ռոմանսների առաջին կատարողը և այդ ռոմանսներից մի քանիսը նվիրված են հենց նրան՝ «Ես դեռ չեմ սիրում», խոսք՝ Ս. Մինսկու, «Կսլանանք» զուգերգը, խոսք՝ Ն. Յազիկովի, «Փոքրիկս մի լար», խոսք՝ Պ. Կոլզովի:

Ֆ. Ափուջանյան.- *Ալ. Սպենդիարյանը շուրջ 35 տարի ապրել և ստեղծագործել է Յալթայում: Ի՞նչ հանգամանքներում է նա հայտնվել այդ քաղաքում և ինչպիսի՞ ստեղծագործական ուղի է անցել:*

Ս. Օթարյան.- Շուտով Լեոնյան ամուսնանում է Այվազովսկու բարեկամի՝ Լեոնիդ Եգորովիչ Մազիրովի աղջկա՝ Վառվառայի հետ: Պսակադրությունից հետո նրանք մեկնում են Պետերբուրգ: Լեոնիդը 1896թ. Պետերբուրգում հանկարծամահ է լինում: Նույն թվականին նա տղա զավակ է ունենում և ի հիշատակ հորը նրան Լեոնիդ են անվանակոչում: Ցանկանալով հավերժացնել որդու հիշատակը՝ Աֆանասի Սպենդիարովը նրա աշխատությունները, գրադարանն ու նմուշների հավաքածուն հանձնում է Դորպատի համալսարանին և մեծ գումար նվիրաբերում Միջազգային երկրաբանական կոնգրեսի մրցանակների ֆոնդին: Ալեքսանդրը գնալով ավելի էր համոզվում, որ Լեոնիդի ընտանիքը պետք է իրենը դառնար: Հայկական եկեղեցին արգելում է ամուսնանալ եղբոր այրու հետ այդ պատճառով նրանց պսակադրությունը տեղի է ունենում 1901թ. Օդեսայում: Գոհ որդու ամուսնությունից կոմպոզիտորի հայրը նրանց է նվիրում 1890թ. Յալթայում գնած տունը, որը պատկանել է Սերբիայի Նատալիա թագուհուն: Յալթա տեղափոխվելուց հետո Սպենդիարով ամուսինների տունը դառնում է քաղաքի երաժշտական կյանքի կենտրոնը: Այդ երեկոների այցելուներից մեկն էլ Մաքսիմ Գորկին էր, որի հետ հանդիպումից ծնվեց «Չկնորսն ու փերին» բալլադը: Յալթայում կոմպոզիտորը ծանոթանում է այնպիսի անվանի մտավորականների հետ, ինչպիսիք էին Լև Տոլստոյը, Չեխովը, կոմպոզիտորներ Գլազունովն ու Արենսկին: Սպենդիարյանը 1902թ. Յալթայում հիմնում է սիրողական երգչախումբ, մեծ աջակցություն է ցուցաբերում այդ երգչախմբի կարիքավոր անդամներին օգնում է երաժշտական ընդունակություններ ունեցող երեխաներին՝ վճարելով նրանց կրթաթոշակները: Սպենդիարյանը՝ որպես Հայ Բարեգործական Ընկերության նախագահ, կազմակերպում է գաղթական հայերի օգնության ծրագիր: Այդ տարիների երկարատև աշխատանքի արդյունք է «Ղրիմյան էսքիզներ» սուիտը (1902-1911թթ.): Կոմպոզիտորն այն նվիրել է Այվազովսկու հիշատակին:

1905թ. կոմպոզիտորը սկսում է աշխատել մի նոր ստեղծագործության վրա՝ Լերմոնտովի «Երեք արմավենի» բանաստեղծության թեմայով մեծ նվագախմբի համար սիմֆոնիկ պատկեր: Այս ստեղծագործության համար 1908թ. նրան շնորհվեց Գլինկայի անվան մրցանակ:

Դեռևս 1901թ.-ից Սպենդիարյանը նաև փորձեր արեց գրել օպերա, նույնիսկ 1909թ. փորձեց օպերայի վերածել հայոց «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը, բայց չհաջողվեց: 1916թ. Սպենդիարյանը մեկնում է Թիֆլիս, նրան դիմավորողների մեջ էր Ռոմանես Մելիքյանը, որին արդեն կոմպոզիտորը ճանաչում էր Պետերբուրգից: Թիֆլիս ժամանելու հենց առաջին օրերից սկսվում է կոմպոզիտորի շփումը հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ: Բանաստեղծը նրա ու-շադրությանն է ներկայացնում «Թմբկաբերդի առումը» պոեմը, որը անմիջապես դուր է գալիս Սպենդիարյանին: Վեր թռչելով տեղից նա բացականչում է. «Այ, սա ուրիշ բան է: Սա հենց այն է, ինչ ինձ պետք է»: Վերադառնալով Սուդակ կոմպոզիտորը սկսում է աշխատել օպերայի վրա:

Ֆ. Ափուջանյան.- *Միրեյի Մարինե, Ալ. Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործական գործունեության երրորդ էտապը կապված է խորհրդային Հայաստանի հետ, կուզենայինք մեր ընթերցողներին համառոտ ներկայացնել նրա կյանքի այդ շրջանը:*

Ս. Օթարյան.- Սամուլից տեղեկանալով գրականագետ, հասարակական ու պետական գործիչ, (1921-23թթ. Լուսժողկոմ) Պողոս Մակինցյանի աշխարհասփյուռ հայ մտավորականությանն ուղղված՝ հայրենիք վերադառնալու կոչի մասին, Ալ.Սպենդիարյանը դիմում է Հայաստանի իշխանություններին և 1924թ. գարնանը ստանում է Հայաստան գալու հրավեր: Նույն թվականի աշնանը նա արդեն Երևանում էր իր երկու դուստրերի՝ Մարինայի և Ելենայի հետ: Սկզբում հյուրընկալվելով Խ. Աբովյանի տանը, այնուհետև նա ապրում էր Երևանցի մեծահարուստներ Մելիք-Աղամալովների Կոնդի առնաճնատանը: Հայ մտավորականները մեծ խանդավառությամբ ընդունեցին կոմպոզիտորին: Երևանյան հին շինություններից մեկի՝ Գեոյի մզկիթի բակում գործող թեյարանը մտավորականության հավաքատեղին էր դարձել և այդ վայրը նրանք կատակով «Հայկական Ակադեմիա» էին կոչում: Երևանում ապրած տարիներին Սպենդիարյանը մտերմություն էր անում հատկապես կոմպոզիտորներ Ռ. Մելիքյանի և Ն. Տիգրանյանի հետ:

1923թ. Երևանում արդեն Կոնսերվատորիա էր բացվել և Սպենդիարյանը ևս ընդգրկվեց Կոնսերվատորիայի դասատուների կազմում: Սպենդիարյանը անչափ կարևոր էր համարում աշխատանքը երիտասարդ կադրերի հետ, որոնք համախմբվում էին նրա շուրջը՝ գիտակցելով, որ նրանից սովորելու շատ բան ունեն:

Երևանում նոր էին ստեղծվում մշակութային հաստատություններ, և Սպենդիարյանը ակտիվ համագործակցում էր դրանց հետ: Նա երբեմն այցելում էր Երևանի միակ երաժշտական դպրոցը, որը հետագայում կոչվեց իր անունով: Սպենդիարյանը աշխատում էր լարված և մեծ ոգևորությամբ և ամեն օր Կոնդի բարձունքից իջնել քաղաքի կենտրոն՝ դժվարացնում էին նրա աշխատանքը: Իմանալով այդ մասին՝ ճարտարապետ Թամանյանը առաջարկում է նրան սենյակ տրամադրել Հայաստանյաց առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդարանի շենքում:

Այդ շենքի շուրջ գեղեցիկ բնապատկերներ էր բացվում, որից ոգեշնչված Սպենդիարյանը գրեց իր լավագույն սիմֆոնիկ երկերից մեկը՝ «Երևանյան էտյուդները»: Մինչև Սպենդիարյանի Երևան գալը՝ ջութակահար Արտ. Այվազյանի ջանքերով կոնսերվատորիայում ստեղծել էին լարային քառյակ: Այդ գործում մեծ եղավ Ադամյանի և Մելիքյանի աջակցությունը: 1924թ. դեկտեմբերի 10-ին կայացավ առաջին համերգը՝ կազմված Սպենդիարյանի ստեղծագործություններից, համերգը ղեկավարում էր կոմպոզիտորը: 1925թ. պաշտոնապես գործում էր նվագախումբը, որի գեղ. ղեկավարն էր Արշակ Ադամյանը: Շուտով Սպենդիարյանը ստանում է Երևանի քաղաքացու անձնագիր, դառնում կոնսերվատորիայի պրոֆեսոր: 1926թ. նրան հատկացնում են կրկին Թամանյանի առաջարկությամբ մի սենյակ՝ Նալբանդյան 29 հասցեում, այժմ Նալբանդյան 21: Շենքը կառուցվել էր Երևանի այն ժամանակվա գլխավոր ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանի նախագծով: 1926թ. մեծ շուքով նշվեց Սպենդիարյանի ստեղծագործական գործունեության 25 ամյակը, որը նշանավորվեց նրա ստեղծագործություններից կազմված համերգով:

1930թ. Մոսկվայում կայացավ «Ալմաստ» օպերայի առաջին ներկայացումը, ուր Ալմաստի դերում հանդես եկավ Մայա Մաքսակովան, Թաթուլի դերում՝ Պավել Լիսիցյանը և այլն: Երևանում 1933թ. առաջին ներկայացնումը Ալմաստի դերում՝ Պավել Լիսիցյանը և այլն: 1939թ. Մոսկվայում կայացավ Հայկական մշակույթի տասնօրյակ, ուր ներկայացվեց Ալմաստը: Իր հիանալի կատարմամբ Տաթևիկ Սազանդարյանը գերեց բոլորին: Օպերան վերջին անգամ ցուցադրվել է 1983թ., իսկ 1985թ. Տիգրան Լևոնյանը նկարահանել է ֆիլմ: Օպերան գրվել է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա: Առաջին ներկայացման նկարիչը հռչակավոր նկարիչ Մարտիրոս Սարյանն է, առաջին դիրիժորը՝ Գևորգ Բուդաղյանը, լիբրետոյի հեղինակը՝ ռուս բանաստեղծուհի Սոֆիա Պառնոկը, հայերեն տարբերակի հեղինակը՝ Տիգրան Հախումյանը:

Ֆ. Ափուջանյան.- *Ե՞րբ է հիմնադրվել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան տուն-թանգարանը Երևանում:*

Ս. Օթարյան.- Սպենդիարյանի Տուն-թանգարանը, գործում է 1967թ. նոյեմբերի 25-ից, Երևանի Նալբանդյան փողոցի N 21 տանը, որտեղ կոմպոզիտորն ապրել է կյանքի վերջին տարիներին (1926-1928): Թանգարանի ֆոնդերը կազմում են մոտ 1000 միավոր: Ցուցասրահներում ներկայացված են Սպենդիարյանի կյանքին և ստեղծագործությանը վերաբերող նյութեր, իրեր: Էքսպոզիցիայի մի զգալի բաժին նվիրված է կոմպոզիտորի ստեղծագործության երևանյան շրջանին (1924-1928): Ներկայացված է Սպենդիարյանի աշխատասենյակը, որտեղ նա աշխատել է «Ալմաստ» օպերայի գործիքավորման վրա: Ցուցադրվում է նաև հայկական ժողովրդական գործիքների հավաքածու, որը թանգարանի մի առանձին բաժինն է կազմում: Թանգարանում կազմակերպվում են համերգներ, դասախոսություններ:

Երևանյան թանգարանի կենտրոնական ու կարևոր մասը հուշասենյակն է: Այս սենյակում կոմպոզիտորը ապրել է միայն երկու տարի (1926-1928թթ.): Այն վերականգնված է այնպես, ինչպես իր կենդանության օրոք: Երկու զգեստապահարաններից մեկը նրա որդի Աթանասինն էր, որն այնտեղ էր ապրում հոր հետ: Գերմանական «Բեխշտեյն» դաշնամուրը, որը բերվել էր Սուդակից Սպենդիարյանի ստեղծագործական արարման վկան է: Գերմանացի վարպետ Շտեյնբերգի պատրաստած այս ջութակով նա հանդես է եկել պատանեկության և ուսանողական տարիներին: Գրադարակը բերվել է նրա Սուդակի ամառանոցից: Այս սենյակում կոմպոզիտորը հյուրընկալել է անվանի մարդկանց: Նրա մոտ հաճախ էր լինում Ռոմանոս Մելիքյանը, որի հետ ժամերով նստած դաշնամուրի առջև նվագում էին Կոմիտասի երգերը: Մի առիթով նա ասել է «Դժբախտաբար ես ուշ ծանոթացա Կոմիտասի երգին: Եթե ես ավելի շուտ իմանայի, կգնայի այլ ճանապարհով.... ոչինչ, փոխարենը ես հիմա եմ նրանից սովորում»: Ամենից շատ նա Ալմաստի մեներգն էր նվագում: Մինչև կյանքի վերջը նա սիրահարված էր իր հերոսուհուն: Անկյունում դրված աշխատասեղանի վրա նրա մատիտներն են, նոթատետրը, կնոջ լուսանկարը, որը միշտ սեղանին էր: Կոմպոզիտորը սրտի հիվանդություն ուներ և այն սրվել էր, այդ իսկ պատճառով կինը կանչում էր Սուդակ, սակայն նա հետաձգեց մեկնումը՝ հանուն համերգի, հօգուտ կոնսերվատորիայի ֆոնդի: Այդ համերգի ժամանակ նա իրեն վատ է զգում, բայց մինչև վերջ ղեկավարում է այն: Մի քանի օրից նրան այցելության գալիս բժիշկ Մելիք-Ադամյանը քննելով, նրա մոտ հայտնաբերում է թոքերի բորբոքում: Մայիսի երեքին նրան տեղափոխում են հիվանդանոց: 1928թ. մայիսի 7-ին նա մահանում է:

«ԼՈՒՍԱՐՁԱԿԻ» ՏՈՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԱՌԹԻՎ

ՕՎՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
թիվ 2 միջն. դպրոցի ուսուցչուհի

Առաքինի մաքուր ու սուրբ,
Հոգի ունեք ազնիվ ու նուրբ,
Գարնանային տոնի առթիվ,
Ձեզ՝ բարիքներ անթիվ,
անթիվ:

ԷՎԵԼԻՆԱ ԱՋԱՄՅԱՆԻՆ
ՎՏԲ Հայաստան բանկի գլխավոր հաշվապահ

Իր զավակների նվիրյալ մորը՝
Շնորհավորում ենք
մայրության օրը,
Թող բարգավաճի ձեր
ընտանիքը,
Եվ խաղաղ լինի հայոց
երկինքը:

ԱՐՄԻՆԵ ՁԱՐԳԱՐՅԱՆԻՆ
Սպիտակի ՏՀՏ-ի բաժնի վարիչ

Շնորհավորում ենք քեզ
Արմինե,
Հոգիդ գարնան պես ջերմ ու
սիրուն է,
Թող Աստված պահի քեզ միշտ
բախտավոր,
Երջանիկ եղիր ամեն, ամեն օր:

ՄԱՐՈՒՍՅԱ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ
«Սպիտակի ֆերմեր» ասոցիացիայի աշխատակցուհի

Ծաղկափթիթ այս օրիորդին
Ձոնում ենք այս մաղթանքը հին՝
Բարով հասնես քո մուրազին,
Արժանանս քո երազին:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
ՎՏԲ Հայաստանյան բանկի աշխատակցուհի

Ձահել մայրիկ՝ դու՝ Հայկանուշ
Բալիկներով սիրուն, անուշ
Ապրեք առողջ ու երջանիկ,
Եվ ունենաք պայծառ գալիք:

ՀԵՂԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ
Սպիտակի Սոցիալական ապահովագրության կենտրոնի աշխատակցուհի

Հեղինե՝ ժրաջան ու
պարտաճանաչ,
Դու՝ ժողովրդից սիրված ու
ճանաչ,
Թող ճամփադ լինի ծաղկած ու
կանաչ,
Կյանքդ՝ երջանիկ ու շատ
բարգավաճ:

ՌՈՒԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ
Սպիտակի ՏՀՏ գլխավոր տեսուչ

Գլխավոր տեսուչ,
Օրիորդ վայելուչ՝
Մեր լավ Ռուզան,
Մենք Ձեզ մաղթում ենք.
Մեծ բախտ ու մեծ սեր,
Բարիք բազմազան:

ՆԱԴՅԱ ՊԱՊՈՅԱՆԻՆ
Շիրակամուտի միջն. դպրոցի ուսուցչուհի

Ուսուցչուհի վաստակաշատ,
Մայր եք, վաղուց ու նաև՝ տատ,
Մաղթում ենք Ձեզ
երջանկություն,
Եվ բարիքներ բյուր ու առատ:

ՍՈՖԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ
Սպիտակի Սոցիալական ծառայության աշխատակցուհի

Ջատագով եք լավի, բարու,
Երկու զավակ ունեք արու,
Մաղթում ենք, որ լինեք առողջ,
Եվ կատարվեն իղձերդ ողջ:

ՍԻԼՎԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
Սպիտակի հիվանդանոցի ընդունարանի հերթապահ քույր

Ընդունարանի մեր հոգատար
քույր,
Օգնել ես մարդկանց
բազմաթիվ ու բյուր,
Կյանքդ դալարի, միշտ մնա
գարուն,
Եվ արժանանաս ամենայն
բարուն:

ՄԱՐԻԵՏԱ ՕՀԱՆՅԱՆԻՆ
Սպիտակի պետական քոլեջի ուսուցիչ

Դուք արժանապատիվ ու
հայավայել
Մեծ չարչարանքով զավակ եք
պահել,
Նրանց ընծայել Ձեր կյանքը
ջահել,
Խոսքն ի՞նչ կարող է Ձեր
սիրտը շահել,
Աստված հատուցի արածին
վայել:

ԻՆԱՌԱ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ
Արևաշողի միջն. դպրոցի ուսուցչուհի

Մանուկների աշխարհում
Հավետ խինդ է ու գարուն,
Շնորհալի մանկավարժ,
Որ նրանց շատ ես սիրում,
Արժանանաս դու բարուն,
Փնտրած բախտին ու սիրուն:

ԹԱԳՈՒՀԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ
բժշկուհի

Խելակորույս մեր դարում,
Դուք ծառայում եք բարուն,
Բուժել եք բյուր մանուկներ,
Վայելում եք հարգանք, սեր,
Երջանկությունը թող միշտ
Ուղեկիցը լինի Ձեր:

ԳՈՀԱՐ ԲԱԲԵԼՅԱՆԻՆ
Գեղասարի մանկապարտեզի դաստիարակչուհի

Մանուկների սիրելի մեր ընկեր
Գոհար,
Նրանց սերն անչափ թանկ է
քեզ համար,
Մաղթում ենք՝ մնաս դու
գեղեցիկ հար,
Ճաշակես բարիք անթիվ,
անհամար,
Թող շնորհավոր լինի քո տոնը,
Գոհար:

ԱՊՐԻԼՄԵԿՅԱՆ ԱՊԱՐԱՆՅԱՆ ԱՆԵԿԴՈՏՆԵՐԻ ՇՔԱՀԱՆԴԵՍ



Ապարանցին մտնում է գոմ, տեսնում էշը
սատկել է, ասում է.
-Էլ իմ ապրելը քանի կոպեկ արժի...ու կախվում է:

* * *

Մեկը գնում է Ապարան, մի պառավի հարցնում.
-Տատի ջան, ճի՞շտ ա, որ ապարանցին էշին
ումուդ ա ասում.
- հա, ումուդ ջան:

* * *

Ապարանցին գիրքը վերցնում, բարձրանում է
սարի գլուխը, հարցնում են.
-Ինչու՞ ես ելնում սարի գլուխը:
-Բարձրագույն կրթություն եմ ստանում:

* * *

Ապարանցի տատ ու թոռ խոսում են, թոռն ասում է.
-Տատի, մեռնեմ գերեզմանիդ:
Տատը՝ թե.
-Չէ, բալես, դու ջահել ես, ես մեռնեմ քո
գերեզմանին:

* * *

Ապարանցին երեխային սայլակով դնում է
պահարանի վրա:
Հարևանը հարցնում է.
-Ինչի՞ ես դրե բարձր տեղ:
-Առաջ ընկնում էր, ձենը չէինք լսում:

* * *

Ապարանցուն հարցնում են.
-Որ մի սիրուն, կապուտաչյա, բոյով,
ֆիգուրայով, շեկ աղջիկ լինի՝ հետը կքնե՞ս:
Ասում է.
- Որ քունս տանի, ընչի՞ չեմ քնի:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՆՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՏԵՆԻՆ

«Նվիրում ենք այս բազրիքը Սբ. «Հարություն» եկեղեցու ատենին, Տիգրան Դանիելյանի և 2007թ. խաչքավոր Արթուր Դանիելյանի ընտանիքներից»:

Այս տարվա Ծաղկազարդի կիրակի օրը Սպիտակի Սբ. «Հարություն» եկեղեցի այցելողներն անշուշտ տեսել են եկեղեցու նորակառույց բազրիքը և կարդացել նրա վրայի այս արձանագրությունը:

Սպիտակի նորակառույց եկեղեցին գործում էր արդեն 8 տարի, սակայն նրա ներքին հարդարման աշխատանքները դեռևս ավարտին չէին հասցված: Ներքին բազրիքը, որն անջատում է ատեանը աղոթարանից դեռևս կառուցված չէր և մարդիկ անգիտությամբ, կամ պատահականորեն ոտք դնելով սուրբ տարածքի վրա՝ ակամա մեղք էին գործում: Ի ուրախություն մեզ՝ այս տարի մարտ ամսին Տիգրան Դանիելյանի և 2007թ. եկեղեցու խաչքավոր Արթուր Դանիելյանի միջոցներով կատարվել է եկեղեցու բազրիքի շինությունը: Այժմ գեղեցիկ ձևաշարով, մարմարյա վարդագույն բազրիքն անջատում է սուրբ տարածքը աղոթասրահից և մարդիկ անգիտակցորեն այլևս չեն տրորում սուրբ վայրը և ակամայից մեղք չեն գործում: Որի համար հավատացյալներն իրենց երախտագիտությունն են հայտնում բարերարներին: Եվ նրանց բարօրության և առողջության համար աղոթում են առ Աստված:

Աշխեն Հովհաննիսյան

ԵԿԵՂԵՑԻ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Հունվարի 29-ին Հայաստանյաց եկեղեցին տոնում է Ղևոնդյաց քահանայից տոնը: Այդ օրը բոլոր հայ քահանաներին ձոնված տոն է, քանի որ նրանք հանդիսանում են շառավիղը և հաջորդները Ս. Ղևոնդ երեցի և Ս. Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսի, ովքեր Ավարայրի ճակատամարտից առաջ հերոսական մարտի միջոցով դուրս շպրտեցին պարսիկ մոգերին, որոնք մեր երկիր էին մտել 451 թվականին՝ կործանելու մեր սրբություններն ու սրբավայրերը և մեր սրբասուրբ հավատքը: Այս առիթով Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի ներկայացմամբ Հայ եկեղեցու Գուգարաց թեմում իրենց նվիրումի, բեղուն և արդյունաշատ գործունեության համար մի խումբ քահանաների, ի թիվ որոնց նաև Սպիտակի տարածաշրջանի Արևաշող և Սարահարթ գյուղերի հոգևոր հովիվ Տ. Մովսես քահանա Աշուրյանին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից շնորհվել է քահանայական Լանջախաչ կրելու իրավունք:

«Լուսարձակ» թերթի խմբագրակազմն իր ընթերցողների անունից նույնպես շնորհավորում է մեր սիրելի արժանաշնորհ քահանա հայրերին՝ Լանջախաչ ստանալու կապակցությամբ: Մաղթում, որ Ամենազոր Տերը պտղաբեր դարձնի հոգևոր անդաստանը և բազմապատիկ պարգևներ շնորհի «աստ և ի հանդերձելումն»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Սպիտակի մտավորականներ» հկ-ն Հայաստանի ՓՄՁ-ՀԱԿ հիմնադրամի աջակցությամբ Սպիտակի տարածաշրջանում անց է կացնում հաշվապահների վերապատրաստման դասընթացներ և վաճառողների խորհրդատվություն հետևյալ թեմաներով՝

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝
1. «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ»
2. «ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումներ»
3. «Հաշվապահական հաշվառում»
4. «Շուկայագիտություն»
5. «Կառավարում»
6. «Ֆինանսական կառավարում»
7.«Մարդկային ռեսուրսների կառավարում»
8. «Արտադրության կառավարում»
9. «ՓՄՁ- հասարակություն» կապերի ստեղծում
10 Վաճառող-վաճառողուհիներ

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝
1. Ձեռնարկության տնտեսական գործունեության վերլուծություն
2. Ներդրումային և զարգացման ծրագրերի կազմում
3. Գործարար ծրագրերի մշակում
4. Ձեռնարկության կառավարման բարելավում
5. Մարքեթինգի բարելավում
6. Շուկայի ուսումնասիրություն
7. Ձեռնարկության զարգացման խորհրդատվություն (OD)
8. Հաշվապահության վարում և ֆինանսների կառավարում
9. Հարկային և մաքսային խորհրդատվություն
10. Իրավաբանական խորհրդատվություն

Դասընթացներին և խորհրդատվությանը մասնակցողներին տրվում է վկայական:
Մանրամասների համար զանգահարել 2-30-38, (094) 34-56-94 հեռախոահամարներով:

«ԱՓՈՒՋԱՆՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ 2007Թ. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվարկային բաժնի մնացորդը 01.01.2007թ. դրությամբ	3,2
2. Համախառն եկամուտ	3039,3
Ծախսեր	2999,0
3. Եկամտի աղբյուրներ	
ա. բաժանորդագրության արժեք	278,0
բ. Անհատ վաճառք	144,9
գ. ՀՀ մշակույթի նախարարության կողմից ոչ պետական մամուլի տրված սուբսիդիա	500,0
դ. «Եվրասիա» հիմնադրամից ստացված ծրագրի իրականացման գումար	2116,4
4. Փաստացի կատարված ծախսեր	2652,9
Աշխատավարձ	870,0
Սոցվճար	226,5
Տպագրության ծախսեր	335,5
Բանկային ծառայություն	11,3
Տնտեսական ծախսեր (շենքի վարձ, հեռախոս, էներգիա, գազ, գույքի ձեռքբերում և այլն)	1555,7
5. 2008թ. հունվարի դրությամբ հաշվարկային հաշվի մնացորդ	353,5

Տնօրեն՝ Ֆ. Ափուջանյան
Հաշվապահ՝ Շ. Կոստանյան

Գլխավոր խմբագիր՝ ՖԱՀՐԱԴ ԱՓՈՒՋԱՆՅԱՆ
Խմբ. հասցեն՝ ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փող. 7/23, հեռ. 2-30-38, 2-35-38
Կայքէջ՝ http://www.lusardzak.com
Ստորագրված է տպագրության 23.04.2008թ.

Համարի թողարկման պատասխանատու՝ Ֆ. ԱՓՈՒՋԱՆՅԱՆ
Համակիկարգչային շարվածքը՝ «Լուսարձակ» թերթի խմբագրության: Ծավալը՝ 1 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 1000 օրինակ
Գրանցման վկայական 01Մ000130

Տպագրվել է «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:
Վանաձոր, հեռ.՝ 4-02-29:

Նյութերը չեն գրախոսվում, չեն վերադարձվում:
Հեղինակները պատասխանատու են փաստերի ճշտության համար:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝ «Ափուջանյան և որդիներ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 7/23: Գրանցման վկայական՝ 03 Ա 05 23 38, տրման օրը՝ 05.08.02թ.
Գինը պայմանագրային: